

ՄԵԼԼՍԵՊՏ (ՄԻԿՐՖԵՆՈԼԱՏ ՄՈՖԵՏԻԼ) ԴԵՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ՝ ՊԱՅԻԵՆՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տեղեկատվություն միկոֆենոլատ դեղի օգտագործումից պտղին սպառնացող հնարավոր վտանգի մասին

Ուղեցույցի մասին

Մա Մելլսեպտ (միկոֆենոլատ մոֆետիլ) դեղի ուղեցույց է պացիենտների համար, որը պարունակում է տեղեկատվություն պտղի համար միկոֆենոլատի վտանգի և այդ վտանգը նվազեցնելու ուղիների մասին:

Եթե Դուք բուժում եք ստանում Մելսեպտով, կամ այլ դեղով, որը պարունակում է միկոֆենոլատ, և կարծում եք, որ ունեք հղիանալու հավանականություն, ապա բժիշկը կգրուցի Ձեր հետ հղիության ընթացքում միկոֆենոլատ դեղի օգտագործումից երեխայի առողջությանը սպառնացող հնարավոր վտանգի մասին, հղիանալու պլանավորման մասին և կպատասխանի այս խնդիրներին վերաբերվող Ձեր հարցերին: Այս ուղեցույցը կօգնի Ձեզ հիշելու տեղեկատվությունը, որը կստանաք Ձեր բժշկից: Պահեք այն, որպեսզի հասանելի լինի Ձեզ ցանկացած ժամանակ: Ի հավելումն, կարևոր է, որ կարդաք դեղի ներդիր թերթիկը, որպեսզի ունենաք դեղի մասին լրարժեք տեղեկություն:

Որոնք են վտանգները

Միկոֆենոլատն ունի վիժում և բնածին արատներ առաջացնելու բարձր վտանգ: Դրա առաջացման պատճառը հնարավոր չէ բացատրել, սակայն զարգացման հավանականությունը շատ ավելի բարձր է այն հղիների մոտ, ովքեր ընդունում են միկոֆենոլատ, ի համեմատ այլ իմունոսուպրեսիվ դեղեր ընդունողների, և շատ ավելի բարձր է, քան դրանց զարգացման վտանգը ընդհանուր բնակչության մեջ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ միկոֆենոլատ ընդունող հղիների կեսը (45 to 49%) ունեցել են վիժում, ի համեմատ այլ հղիների (12 - 33%) ովքեր ընդունել են այլ իմունոսուպրեսիվ միջոցներ: Երեխաների ընդհանուր թվի մեկ քառորդ մասը (23 - 27%) ծնվել է բնածին արատներով, այն մայրերի մոտ, որոնք ընդունել են միկոֆենոլատ հղիության ընթացքում, ի համեմատ այն երեխաների որոնց մայրերը բուժվել են այլ իմունոսուպրեսիվ դեղերով (4 - 5%), ինչպես նաև ի համեմատ ընդհանուր բնակչության (2-3%):

Հիմնական հանդիպող բնածին արատները հետևյալն են. ականջի, աչքի ու դեմքի, սրտի, մատների, երիկամների կամ կերակրափողի արատներ: Հանդիպել է նաև նյարդային համակարգի բնածին արատ, ինչպիսին է «սպինա բիֆիդան»-ն:

Այսպիսով, միկոֆենոլատը չպետք է օգտագործվի այն կանաց մոտ, ովքեր հղի են, կամ պետք է հղիանան, եթե առկա է փոխպատվաստված օրգանի մերժման կանխարգելման այլընտրանքային բուժում: Խնդրում ենք, խորհրդակցե՛ք Ձեր բժշկի հետ հավելյալ տեղեկատվություն ստանալու համար:

Ովքեր ե՞ն գտնվում ռիսկի խմբում:

- Հղի պացիենտները.
- Վերարտադրողական տարիքի կանայք և աղջիկները

Մինչև միկոֆենոլատով բուժում սկսելը կամ բուժումը շարունակելը բժիշկը կխոսի Ձեր հետ վիժման և բնածին արատների առաջացման բարձր վտանգի և դրանցից խուսափելու մեթոդների մասին: Դա կօգնի Ձեզ հասկանալ երեխային սպառնացող վտանգը: Բժիշկը կպատասխանի նաև Ձեր բոլոր հարցերին:

Ինչպես խուսափել վտանգից

Կանանց և տղամարդկանց համար նախատեսված տեղեկությունը ներկայացվում է առանձին՝ այն առավել լավ հասկանալու համար:

Եթե դուք հարցեր ունեք՝ այս ուղեցույցում պարունակող տեղեկատվության վերաբերյալ՝ խնդրում ենք զրուցեք Ձեր բժիշկի հետ:

Կարևոր տեղեկատվություն կանանց համար

Քանի որ միկոֆենոլատը մեծացնում է վիժման և բնածին արատների առաջացման վտանգը, անհրաժեշտ է.

- Մինչև բուժումը սկսելը համոզվել, որ հղի չեք;
- Օգտագործել արդյունավետ հակաբեղմնավորիչներ բուժման ընթացքում և բուժման դադարից հետո առնվազն 6 շաբաթվա ընթացքում;
- Անմիջապես խոսել բժիշկի հետ հղիության կասկածի դեպքում:
- Զրուցել բժիշկի հետ հղիություն պլանավորելու դեպքում

Վերարտադրողական տարիքի բոլոր կանայք, պետք է ունենան հղիության բացասական թեստ մինչ բուժման սկիզբը՝ համոզվելու համար, որ հղի չեն: Ձեր բժիշկը կբացատրի հղիության թեստերի տեսակների և այն ժամանակահատվածի մասին, որի ընթացքում պետք է իրականացնել թեստը մինչ միկոֆենոլատով բուժման սկիզբը:

Խորհուրդ է տրվում անցկացնել հղիության երկու թեստ՝ արյան կամ մեզի: Խորհուրդ է տրվում իրականացնել երկրորդ թեստը առաջին թեստից 8-10 օր հետո, ինչպես նաև միկոֆենոլատ մոֆետիլ դեղի կիրառումը սկսելուց անմիջապես առաջ: Ձեր բժիշկը հնարավոր է խորհուրդ տա Ձեզ կրկնել թեստը, հատուկ դեպքերում (օրինակ եթե հուսալի հակաբեղմնավորիչներ ինչ որ պատճառով չեն օգտագործվել): Նա կզրուցի Ձեր հետ բոլոր հղիության թեստերի արդյունքների մասին:

Համոզվելու համար, որ միկոֆենոլատի բուժման և դրա դադարից հետո 6

շաբաթվա ընթացքում հղի չէք, պետք է օգտագործել արդյունավետ հակաբեղմնավորիչներ: Դուք պետք է օգտագործեք հուսալի հղիությունը կասեցնող մեկ մեթոդ, եթե սեռական ակտի ընդհատումը ընտրված չէ որպես մեթոդ: Երկու իրար լրացնող հակաբեղմնավորիչ մեթոդներն առավել նախընտրելի են՝ կնվազեցնելու համար հղիանալու հավանականությունը: Ձեր բժիշկը կգրուցի հակաբեղմնավորիչների տեսակների մասին և կօգնի ընտրել առավել Ձեզ հարմարը:

Եթե կարծում եք, որ հղի եք միկոֆենոլատով բուժման պահին կամ դրա դադարից հետո 6 շաբաթվա ընթացքում, խնդրում ենք անմիջապես խոսել բժիշկի հետ: Չափազանց կարևոր է ՉԴԱԴԱԸԵԼ միկոֆենոլատի ընդունումը առանց բժիշկին տեղյակ պահելու: Եթե դուք փոխվաստման ենթարկված պացիենտ եք, Ձեր փոխպատվաստված օրգանը հնարավոր է մերժվի, եթե ընդհատեք միկոֆենոլատի ընդունումը: Բժիշկը կօգնի որոշելու արդյոք հղի չէք, և համապատասխան խորհուրդ կտա:

Տեղեկատվություն տղամարկանց համար

Մահմանափակ կլինիկական ապացույցներ կան, որոնք վկայում են բնածին արատների կամ վիժման զարգացման մասին, եթե պացիենտի գուգրնկերն է ընդունել միկոֆենոլատ: Այնուամենայնիվ, վտանգը չի կարող լինել լիովին բացառված: Իբրև նախազգուշացում, խորհուրդ է տրվում, օգտագործել վստահելի հակաբեղմնավորիչներ բուժման ընթացքում կամ միկոֆենոլատի վերջին օգտագործումից 90 օրվա ընթացքում:

Խորհրդակցե՛ք բժիշկի հետ, եթե պլանավորում եք հայրանալ:

Եթե կարծում եք, որ Ձեր գուգրնկերուհին կարող է հղիանալ այն ժամանակահատվածում, երբ Դուք ընդունում եք միկոֆենոլատ կամ բուժման դադարից 90 օրվա ընթացքում, խոսե՛ք բժշկի հետ: Բժիշկը կարող է խորհուրդ տալ, թե ինչպես վարվել:

Մի՛ հանդիսացեք սերմնահեղուկի դոնոր բուժման ընթացքում կամ բուժման դադարից հետո 90 օրվա ընթացքում:

Կարևոր տեղեկություն պացիենտների համար

Այս դեղը նախատեսված է միայն Ձեզ համար: Մի՛ փոխանցեք այն ուրիշներին: Այն կարող է վնասել նրանց, նույնիսկ եթե նրանց և Ձեր հիվանդության ախտանշանները նույն են: Բուժման ավարտից հետո վերադարձրեք բոլոր չօգտագործված դեղերը Ձեր դեղագետին :


Մի՛ հանդիսացեք արյան դոնոր միկոֆենոլատով բուժման ընթացքում և դրա դադարից հետո 6 շաբաթվա ընթացքում:


Հղիության ընթացքում Մելլսեպտ դեղի ազդեցության հետ կապված հրատապ հարցերը քննարկե՛ք բժիշկի հետ հետևյալ հեռախոսահամարով՝

| | |
|----------------------------|--|
| Աշխատանքային ժամերին. | |
| Ոչ աշխատանքային ժամերին | |

Կարևոր տեղեկություններ, որը անհրաժեշտ է հիշել.

- Միկոֆենուլատը առաջացնում է բնածին արատներ և վիժում;
- Եթե դուք վերարտադրողական տարիքի կինն եք, նախքան բուժումն սկսելը պետք է ունենաք հղիության բացասական թեստ;
- Միկոֆենուլատով բուժվող տղամարդիկ և կանայք պետք է հետևեն հակաբեղմնավորիչ օգտագործելու բժշկի խորհրդին;
- Եթե դուք լիովին չեք հասկանում այն տեղեկատվությունը, որը ստացել եք, հարցրեք բժշկին լիարժեք բացատրություն ստանալու համար, մինչև բուժման սկիզբը:
- Մի դադարեք միկոֆենուլատի ընդունումը առանց բժշկին տեղեկացնելու
- Այս դեղը միայն Ձեզ համար է մի տվեք այն այլ անձանց, քանի որ դա կարող է լինել վնասակար նրանց համար:

Գայանե Ղազարյան  16.10.2020
 Հոֆֆմանն-Լյա Ռոշ ընկերության դեղերի անվտանգության պատասխանատու,
 Ակտի Գրուպ ՖԲԸ

Նունե Կարապետյան  16.10.2020
 Հոֆֆմանն-Լյա Ռոշ ընկերության կոմերցիոն ղեկավար, Ակտի Գրուպ ՖԲԸ